գործընթացը վիճարկելու հնարավորություն ընձեռնելու մասով, կխաթարի Օրենքի հիմնական նպատակներից մեկը, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

6. Դատական ծախսեր.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»: ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանը գտնում է, որ հայցի մերժման արդյունքում դատական ծախսերը պետք է կրի հայցվոր կողմը, և հաշվի առնելով պետական տուրքի նախապես վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-ր, 362-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. «ՄՏԿ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից Ներկման համար անհրաժեշտ կրկնագլանակների ձեռքբերման նպատակով հայտարարված №168/GArm/24_4.3_086/29.04.24 ծածկագրով մրցակցային ընտրության հրավերը անվավեր ճանաչելու պահանջ մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am